


32

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



ՄՈՒԷԷՆ ՍՊԱՐԱՊԵՏ ՀԱՅՈՅ

MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**32**

Yerevan – 2021

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**32**

Ереван – 2021

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**32**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուխաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 32, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. Երևան, 2021: 440 էջ:*

*Հ 31/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2021:*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունն ու բանասիրությունը, եկեղեցու պատմությունն ու երաժշտությունն առնչվող հոդվածներ, Հակոբ Փափազյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի (1-3 հուլիսի, 2021 թ.) նյութեր և հրապարակումներ:*

## ՄՇՈ ՍՈՒՐԲԵ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՄԿԻՎԻ ԾԱԾԿՈՑՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Բանալի բառեր՝** Սուրբ Կարապետ, սկիհի ծածկոց, հրեշտակ, սերովբե, քերովբե, հաշելուծություն, նահատակ, ասեղնագործություն, պատկերագրություն:

Եկեղեցում օգտագործվող տարբեր գործվածքների մի հետաքրքիր տեսակ է սկիհի ծածկոցը: Այն ունի ծիսական նշանակություն: Ավելի վաղ շրջանում այն ունեցել է սկիհը և դրա մեջ առկա գինին փոշուց ծածկելու գործառույթ: Սակայն հետագայում այն դարձել է սրբազան մասունք և օգտագործվել Պատարագի ժամանակ Ընծաները ծածկելու համար: Մաղաքիա Օրմանյանը շեշտում է, որ եկեղեցու մյուս գործվածքները այնքան էլ հստակ գործառույթներ չունենին և կարող էին փոխարինել մեկը մյուսին: Միայն սկիհի ծածկոցներն էին, որ չէին օգտագործվում այլ սպասքի համար<sup>1</sup>:

Այս հոդվածում կներկայացնենք այն ծածկոցները, որոնց արձանագրություններին հստակ հասկանալի է, որ նվիրվել են Մշո Սուրբ Կարապետ վանքին: Սուրբ Կարապետը Տարոն-Տուրուբերան գավառի ամենանշանավոր վանքն է, գտնվում է Մուշի վիլայեթում, Յալկին կազայում, Բազմասարի հարավ-արևելյան լանջին<sup>2</sup>:

Մշո գավառի հյուսիսարևմտյան մասում գտնվող Չիարեթ կամ Խանդրեզ գյուղախմբի մեջ էր ներառված Սուրբ Կարապետ վանքը: Վանքը տարբեր անվանումներ է ունեցել՝ Գլակավանք, Իննակնյան վանք, Չանլը (թրք.-գանգակավոր) վանք: Վանքային համալիրը կազմված է գլխավոր բակի կենտրոնում տեղադրված հինգ եկեղեցիներից բաղկացած տաճարային խմբից, դրանց շուրջ տեղակայված մենախցերից, ուխտավորների կացարաններից, առաջնորդարանից, վանքային սեղանատնից: Հինգ եկեղեցիներն են՝ Ս. Կարապետի վկայարանը, Ս. Ստեփանոս եկեղեցին, Ս. Գևորգ եկեղեցին, Ս. Աստվածածին եկեղեցին,

1 Մ. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս, 1979, էջ 139-140:

2 Ժ. Թիերի, «Արևելյան Թուրքիա կատարած հնագիտական հանապարհորդության նոթեր», Հուշարձան, Տարեգիրք Ա, Երևան, 1987, էջ 123:

Ս. Կարապետի գավիթ-ժամատունը<sup>3</sup>: Ըստ ավանդույթյան՝ վանքը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը՝ ս. Հովհաննես Կարապետի և ս. Աթանազիոսի մասունքները պահելու համար<sup>4</sup>: Առաջին առաջնորդը Զենոբ Գլակն էր, որտեղից էլ Գլակավանք անվանումը:

Մեր ունեցած ծածկոցները հիմնականում վերաբերում են XVIII -XIX դարերին: Ինչպես հայտնում է Ոսկյանը, XVIII դարի կեսերին վանքը բազմաթիվ պարքտեր ուներ, 1784 թ. եկրաշարժից բավականին ավերվել էր, իսկ 1827 թ. հունիսի 27-ին զինված քրդերի մի խումբ հարձակվել էր վանքի վրա և կողոպտել: Ըստ հեղինակի, գողացել էին մոտ 1000 խաչ, արծաթակազմ ձեռագրեր, «50 խալիպ արծաթ, որ եօթ կամ ութ լիտր կի կշռէր...» և այլն: Իր գոյություն ողջ ընթացքում վանքը եղել է «գանձարան», հավաքվել են բազմաթիվ ձեռագրեր և մշակութային արժեք ունեցող այլ գանձեր: Ժողովուրդը հաճախ էր ասում. «Սբ Կարապետի վանքը երկու աղբյուր կը վազի, մեկը՝ արծաթ և մյուսը՝ ոսկի»<sup>5</sup>:

Վանքին մեծապես վնասել են արտաքին թշնամու հարձակումներն ու կողոպուտները, մի քանի անգամ կրկնված երկրաշարժերը, նաև ներքին անհաշտությունները: Արդյունքում վանքը կուտակել էր բազմաթիվ պարտքեր և կորցրել իր երբեմնի հեղինակությունն ու դիրքը: XIX դարի երկրորդ կեսին Սուրբ Կարապետի վանահայրությունը ստանձնել են հայ եկեղեցու և մշակույթի այնպիսի երախտավորներ, ինչպիսիք են Մկրտիչ Խրիմյանը, Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցը, Բաբգեն Եպիսկոպոս Կյուլեսերյանը:

Վանքը հատկապես վերելք է ապրել Գ. Սրվանձտյանցի օրոք, որի ջանքերով և Մ. Խրիմյանի աջակցությամբ, այստեղ դեռ 1863 թ. հիմնվել է տպագրատուն, և մինչև 1865 թ. հրատարակվել «Արծուիկ Տարօնոյ» պարբերականը: Սուրբ Կարապետում XIX դարի սկզբից գործել է Ժառանգավորաց դպրոցը:

Սուրբ Կարապետը բարբարոսաբար ոչնչացվել է 1915 թ. ամռանը: Նահատակված վանականների և աշակերտների շարքում էր նաև վանահայր Վարդան ծայրագույն վարդապետ Հակոբյանը, որը միաժամանակ նաև Տարոնի թեմի առաջնորդական փոխանորդն էր: Մենաստանին հասցվել էր ահռելի նյութական վնաս: Հնարավոր է եղել փրկել գույքի աննշան մասը, այն էլ միայն 1916 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կողից Մուշ առաքված հանձնաժողովի ջանքերով:

<sup>3</sup> Գ. Քերթմենջյան, «Տարոնի և Վասպուրականի վանքային համալիրները. 2. Մշո սուրբ Կարապետ վանք», երճՇՊՀ Տարեգիրք, Գիտական աշխատությունների ժողովածու, հ.2, Երևան, 2001, էջ 131-132:

<sup>4</sup> Ժ. Թիեթի, «Արևելյան Թուրքիա կատարած հնագիտական և անասաբանագիտական նորոգումներ», էջ 124:

<sup>5</sup> Հ. Ոսկեան, Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1953 թ., էջ 210-238:

Սուրբ Էջմիածին են տեղափոխվել Սուրբ Կարապետի խոշոր գաղտնարաններից մեկում հայտնաբերված զգալի թվով գանձեր, որոնք վրիպել էին ջարդարարների ուշադրությունից<sup>6</sup>: Այս աշխատանքների մասին մանրամասն ներկայացված է հանձնաժողովի զեկուլցում<sup>7</sup>: Ի թիվս այլ փրկված իրերի՝ հիշատակվում է հիսունինը սկիհի՞ծածկոց:

Էջմիածնի գանձարանում է պահվում 1754 թվականին Մշո Սուրբ Կարապետ վանքին նվիրված ծածկոցը: Կենտրոնում ճաճանչապսակի մեջ Աստծո Գառն է խաչվառով, մարմինը դեպի ձախ է ուղղված, իսկ գլուխը՝ դեպի աջ (նկ. 1): Գառան դիմաց սկիհ է: Գառան մարմինն ասեղնագործված է զիգագաձև լիցքով և եզերված է մուգ մետաքսաթելով, իսկ մազերը, վզկապը, փայտը և դրոշը ոսկեթել ասեղնագործություն են: Շուրջը 2 տողով արձանագրությունն է.

Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է ԾԱԾԿՈՅՍ ՄԵՐԿԷՐԻՍԻՆ ՀՕՐՆ ԳԱՍՊԱՐ(Ի)Ն, Մ(Ո)ՐՆ ԲՐԱ-  
ԲԻՕՆԻՆ, ՊԱՊՈՒՆ ԳՐԻԳՈՐԻՆ, ՈՐ ՆՆՋԵՅԵ ՄՈՒՇՈՒ ՍԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՌՄԳ:

Արձանագրության տողերի անկյուններում հավասարաթև խաչեր են:

Ծածկոցի ամբողջ մակերեսին համաչափորեն ասեղնագործված են սերովբենների, հրեշտակների և խաչերի պատկերներ: Ծածկոցն ունի բուսական եզրագոտի և ծոպեր:

Աստծո Գառան պատկերումը ծածկոցի կենտրոնում պատահական չէ: Ինչպես գիտենք, նա նույնացվում է Քրիստոսի հետ՝ «Հաջորդ օրը նա տեսավ Հիսուսին իր մոտ գալիս և ասաց. «Ահա՛ Աստու Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհաննես Ա29):

Ծածկոցի հարգարանքի մյուս հատվածը հրեշտակներն են, սերովբենները և քերովբենները: Երկնային քահանայապետության դասակարգման մասին խոսել է Դիոնիսոս Արիոպագացին: Ըստ նրա՝ կարգերը երեքն են, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երեք խմբից՝ ա. աթոռներ, քերովբեններ, սերովբեններ, բ. տերություններ, զորություններ, իշխանություններ, գ. հրեշտակներ, հրեշտակապետեր և պետություններ<sup>8</sup>:

Սկիհի ծածկոցների վրա հանդիպող սերովբենների և քերովբենների պատկերները որոշակիորեն տարբերվում են հայ միջնադարյան արվեստի մյուս հուշարձաններում հանդիպող հրեշտակներից: Ծածկոցների վրա ասեղնագործված

<sup>6</sup> Գ. Բաղայան, «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին. Մաս հինգերորդ: Քիթլիսի նահանգի Մշո գավառը», *Վեմ համահայկական հանդես*, 2016 թ., հունիս, թիվ 2 (54), էջ XXVIII:

<sup>7</sup> «Զեկուցում Մուշ ուղարկուած յանձնաժողովի. Նորին վեհափառութեան Տ.Տ. Գեորգ Ե. Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց», *Արարատ*, 1916, էհ, յուլիս-օգոստոս, էջ 566-586:

[http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1916/1916\(7-8\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Ararat%20Ej/1916/1916(7-8).pdf)

<sup>8</sup> Արեւապագացի Դիոնիսիոս, *Աստվածաբանական երկեր*, Երևան, Նաիրի, 2013, էջ 29-42:



են հրեշտակների միայն գլուխը և թևերը: Այսպիսի հերալդիկ պատկերման պատճառը մի կողմից տեսարանի պարզեցումն ու հեշտացումն էր ասեղնագործողի համար, մյուս կողմից էլ սերովբեների պատկերման եվրոպական ավանդույթ էր: Վառ օրինակներ են Կուտինայի (Քյոթահյա) հախճապակու վրա հանդիպող սերովբեները: Դրանք պատկերվում էին հիմնականում ձվի կախազարդերի վրա: Կախազարդերը կախված էին լինում եկեղեցու կանթեղներից, որպեսզի մկները չկարողանան սպառել ձեթը: Ընդ որում, սերովբեների պատկերներով կանթեղներն ավելի ուշ շրջանի են՝ XVIII դարի<sup>9</sup>: Պատկերման այս հերալդիկ ձևը տարածվեց մետաղական քրոցների, եկեղեցական ծխական հագուստների վրա, քանդակներում՝ Թադեի վանք (Իրան), Կաթողիկե եկեղեցի (Երևան) և այլն:

Սկիհի ծածկոցների վրա քերովբեների և սերովբեների պատկերների ասեղնագործումն ունի հատուկ նշանակություն ու կապված է ծխակարգի հետ: Պատարագի ընթացքում պատարագիչը, վեր բարձրացնելով ձեռքերը, բարձրաձայն ասում է. «և ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին և ասել»<sup>10</sup>: Դրանից հետո հնչում է «Երեքսրբյան» աղոթքը, որի ժամանակ պատարագիչը վերցնում է ծածկոցը սկիհի վրայից<sup>11</sup>: Պատարագի այդ հատվածը վերցված է նսայու մարգարետության 2 գլխից, որտեղ մարգարեն տեսնում է Տիրոջը և սերովբեների, որոնք երգում են երեքսրբյանի սկզբի հատվածը, ապա խոսվում է Աստծո խոսքի պատգամաբերի մասին: Տվյալ հատվածին Պատարագամատուցում հավելվում է «Օրհնեալ որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն», որով հաստատվում է, որ խոսքը Քրիստոսի մասին է: Դրանից հետո ասվում է Քրիստոսի խորհրդավոր ընթրիքի ժամանակ ասված խոսքերը. «Առէք, կերէք, այս է Մարմին Իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի՝ ի քաւություն և ի թողություն մեղաց... Արբէք ի սմանէ ամենեքեան. այս է Արյուն Իմ նորոյ Ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի...», ապա քիչ անց երգվում է «Որդի Աստուծոյ» որի ժամանակ, ըստ Հայ եկեղեցու վարդապետության՝ սկիհում եղած հացը և գինին փոխակերպվում են Քրիստոսի մարմնի և արյան: Համաձայն այդ վարդապետության, Աստված իրապես ներկա է պատարագի ընթացքում, ու «և ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն» հատվածից հետո սկիհի վրայից ծածկոցի հեռացումը խորհրդանշում է Պողոս առաքյալի կողմից Հին Կտակարանային վարագույրի հեռա-

<sup>9</sup> F. Macler, «L' Arménie au Musée Céramique de Sevres», Կուտինայի հայկական հախճապակու արվեստը, Կոմիտասի անվան թանգարան-ինստիտուտ, Երևան, 2016, էջ 16-19, տես նաև՝ Soustiel L., « Kütahya-Jérusalem: Pérégrinations de trois carreaux arméniens », *Extrait de la Revue de Sévres*, № 18, 2009, p. 65.

<sup>10</sup> Պատարագ. Գանձարան աղօթից ի ժամ սրբոյ խորհրդոյ հաղորդութեան (Մեկենասութեամբ՝ Ռ. Գրիգորեանի) էջմիածին, 2002, էջ 133:

<sup>11</sup> Վ. վրդ. Պալեյան, Մեր Պատարագը, էջմիածին, էջ 99:



ցումը, որով հավատացյալներին անտեսանելի կերպով ի հայտ է գալիս Աստված:

Լեհաստանի Յագելոնյան թանգարանում պահվող սկիհի ծածկոցը նույնպես նվիրաբերվել է Մշո սուրբ Կարապետ վանքին (նկ. 2): Միլեզյան թանգարանի տնօրեն Դորոթեյա Վիլլերսը 1936 թվականին գնել էր այս ծածկոցը 200 մարկով և մինչև 1945 թվականը այն Միլեզյան թանգարանի սեփականությունն է եղել: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ այս և մյուս թանգարանների իրերը պահեստավորվել են և միայն պատերազմի ավարտից հետո են տեսակավորվել: Ծածկոցի ինվենտար քարտը չի գտնվել: Միակ տեղեկությունը կարողում ենք պահեստավորման ժամանակ կազմված ցուցակում, որտեղ այն հիշատակված է «ոսկեթել, արծաթաթել ասեղնագործություն, հայկական գրերով ծածկոց՝ XVIII դար»: Թանգարանի աշխատակիցները երկար ժամանակ չեն կարողացել հասկանալ, թե ինչ է այն իրենից ներկայացնում: Տարիներ շարունակ ծածկոցը չի ցուցադրվել, մնացել է պահպանում:

Սկիհի ծածկոցի մասին հոդված են հրատարակել Յոհաննա Սլավինսկան և Յակոբ Օսիեցկին<sup>12</sup>: Այն 91×91 սմ չափեր ունի, բամբակից է, ասեղնագործված է մետաքսաթելով, ոսկեթելով և արծաթաթելով: Իրը ենթարկվել է փորձաքննության, որտեղից էլ որոշվել են ստեղծման մոտավոր ժամանակը (XVIII դար) և կատարման նյութերը: Հետազոտությունն անց է կացվել Յագելոնյան համալսարանի Հնագիտության ինստիտուտում, որից պարզ է դառնում, որ ասեղնագործությունը կատարվել է հիմնականում բարձրորակ արծաթաթելից՝ ոսկու քիչ քանակով<sup>13</sup>: Պատկերագրությամբ նման է մյուս սկիհի ծածկոցներին՝ կենտրոնում շրջանակի մեջ Աստծո Գառան պատկերն է ասեղնագործված (նկ. 3): Գառը նայում է դեպի ձախ, ձեռքին կա խաչվառ, պատկերը ճառագայթավոր շրջանակի մեջ է: Անմիջապես ճաճանչներից հետո ասեղնագործված են տասներկու հրեշտակներ: Ծածկոցի առանցքային մասում չորս կերպարներ են: Յուրաքանչյուրի երկու կողմերում քերովբեներ են՝ ընդհանուր ութը: Եզրային անկյուններում սերովբեներ են ասեղնագործված՝ թվով չորսը (նկ. 4): Ապա արձանագրությունն է, որը գրված է չորս կողմերով: Ծածկոցն ունի ծոպեր: Ամբողջ մակերեսին ասեղնագործված են աստղաձև պատկերներ և չորս հավասարաթև խաչեր:

Նախ կարդանք արձանագրությունը, ապա ներկայացնենք ծածկոցի չորս կերպարներին:

Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՅ ... ԽԱՐՍԵՐ Ի Ս(ՈՒՐ)Բ ԿԱՐԱՊԵՏՍ Ի ՎԱՆ-

<sup>12</sup> J. Sławińska, J. Osiecki, “Velum ormiańskie ze zbiorów Muzeum Uniwersytetu Jagiellońskiego”, *Lehahayer. Czasopismo poświęcone dziejom Ormian polskich*, 2018, № 5, p. 195-243.

<sup>13</sup> M. Biborski, “Wyniki badań składu chemicznego próbek tkanin z haftowanego velum ze zbiorów Muzeum Uniwersytetu Jagiellońskiego Collegium Maius, nr inwentarza 3846/IV”, *Lehahayer. Czasopismo poświęcone dziejom Ormian polskich*, 2018, № 5, p. 245-248.

Քին ԿԱՄ(Ա)ԵԵՅԻ ԿԻ(Ի)ՐԵՂԻՆ ԿՈՂԱ(Կ)ՅՈՒՆ ԹՈՒՐՎԱՆԻՆ ՅՈՐԴՈՒՆ. ՄՐԳՏԵՍԻ<sup>14</sup>  
ԳԱՔՐՈՇԷՍ ՈՐ ՏՎԻՆ ՄՐԳՂՏԵՍԻ ՕՀԱՆՆԵԷՍ ՄԱՐԳԱ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԾՆՈՂԱՅ  
ՀՈԳՈՒ ՆԱՅԵԻ ՀՈՒԲՍԻՄԱ ԱՄԵՆ:

Ծածկոցի ձախ առանցքին պատկերված է խուլյրով, երկար պատմունճանով, աջ ձեռքին բուրվառ, իսկ ձախ ձեռքին տապանակ պահող մարդ (նկ. 5): Ըստ ատրիբուտների հասկանալի է, որ Սուրբ Ստեփանոսն է՝ Ստեփանոս Նախավկան: Նույն կերպ նրան ներկայացրել են նաև Մլավինսկան և Օսիեցկին:

Սուրբ Ստեփանոսը բոլոր մարտիրոսներից անդրանիկն է, Քրիստոսի համար նահատակված առաջին նախասարկավազը, որ իր արյունը թափեց Քրիստոսի սիրտ համար: Նա առաջին դարում առաքյալների կողմից ընտրված յոթ սարկավազներից մեկն էր: Հավանաբար այս երկար պատմունճանը հենց սարկավազի հագուստ էր: Ծեսերի և Պատարագի ժամանակ սարկավազը բուրվառով խնկարկում է եկեղեցին, ուստի Ստեփանոսի ատրիբուտը բուրվառն է: Նրա դեմքը նմանեցվում էր հրեշտակի դեմքի, այդ պատճառով նրան հիմնականում պատկերում էին ավելի նուրբ ու կանացի: Յագելոնյան թանգարանի սկիզի ծածկոցը ևս բացառությունն չէ:

Ստեփանոս Նախավկայի պատկերը առաջին անգամ հանդիպում է Հռոմի Սան-Լորենցո-Ֆուորի-լե- Մուրա եկեղեցու 7-րդ դարի խճանկարներում<sup>15</sup>: Այստեղ նրա հագին սարկավազի հագուստ է՝ երկար զգեստ և սպիտակ թիկնոց: Հագուստն ավելի շատ անտիկ հունական հագուստ է հիշեցնում: Չկան նաև բուրվառը և տապանակը, որոնք հետագայում են դարձել ուղեկցող խորհրդանշաններ:

Հայ միջնադարյան արվեստում նույնպես Ստեփանոսը սիրված կերպար էր: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Դադիվանքի Կաթողիկե եկեղեցու որմնանկարները (XIII դար)<sup>16</sup>, Կիլիկիայի «Սկևռայի մասնատուփ» կամ «Հեթում թագավորի եռափեղկ պահարան» անունով հայտնի մասնատուփը (1293 թ.)<sup>17</sup>, Սևանի Առաքելոց վանքի հարավային դուռը (1486 թ.):

Ստեփանոս Նախավկան բուրվառը աջ ձեռքին պատկերված է նաև Ջնաբերդի Ս. Գրիգոր եկեղեցու Հարավային ավանդատան պատին<sup>18</sup>(նկ. 5, գ): Այս որմնանկարները Ապրակունիսի Ս. Կարապետ եկեղեցու որմնանկարների շա-

<sup>14</sup> Մահտեսի, մահտիսի, մուտեսի, մրդտեսի և այլ բարբառային գրելաձև ունեցող բառ է, որը նշանակում է Երևաղեմ ուխտի գնացած, տե՛ս Ջիզվենեան Վարդ. Պ., Հայերէն աշխարհաբար լեզուի լրակատար բառարան, Խատուր Ա, Հայկա, էջ 1721:

<sup>15</sup> <https://www.romeartlover.it/Vasi46sl.html>

<sup>16</sup> Կ. Մաթևոսյան, Ա. Ավետիսյան, Ա. Ջարյան, Ք. Լամուրե, Դադիվանք. Վերածնված հրաշալիք, Երևան, 2018, էջ 46:

<sup>17</sup> Հ. Տեր-Ղևոնդյան, «Կիլիկյան հայկական արձաթագործության պատմությունից», ՊԲՀ, 1963, № 4, էջ 78:

<sup>18</sup> Ա. Այվազյան, «Ջնաբերդի Գրիգոր եկեղեցու որմնանկարները», ԲԵՀ, 1977, 1 (31), էջ 248:

րունակությունն ասես լինեն<sup>19</sup>: Ազնվաբերդի կամ Ջնաբերդի եկեղեցու, ինչպես նաև Սուրբ Կարապետ եկեղեցու որմնանկարները վերագրվում են Հակոբ և Հարություն Հովնաթանյաններին<sup>20</sup>:

Ծածկոցի վերին առանցքին գահին նստած Քրիստոսն է: Նրա ձախ ձեռքին կա տիեզերքի խորհրդանիշ համարվող խաչով գունդ, իսկ աջ ձեռքը օրհնող ժեստով է (նկ. 6):

Ձեռքի գունդը, լուսապսակը ասեղնագործված են արծաթաթելով, մարմնի բաց մնացած մասերը՝ կարմիր թելով, իսկ հագուստը՝ կապույտով: Սա Քրիստոսի Ամենակալ կամ պանտոկրատոր պատկերագրական տեսակն է: Առաջին անգամ հանդիպում է Մինայի վանքում (6-րդ դարի կեսեր): Այստեղ Քրիստոսի երկու՝ մարդկային և աստվածային էությունները մատնանշելու նպատակով դեմքի աջ և ձախ կեսերը տարբեր կերպ են պատկերված եղել:

Յագելոնյան թանգարանում պահվող սկիհի ծածկոցի վրա ասեղնագործված հաջորդ կերպարն աջ առանցքային մասում է: Երկար կապույտ զգեստով, մի ձեռքին գառ, մյուսին գավազան: Առաջին հայացքից Բարի Հովվի նման է, սակայն Հովհաննես Մկրտիչն է: Գավազանը և լուսապսակը արծաթաթելով են ասեղնագործված, ունի նուրբ դիմագծեր (նկ. 7):

Ըստ ավանդության՝ Հովհաննես Մկրտչի մասունքը պահվում է Մշո սուրբ Կարապետ վանքում: «Եւ իբրև դարձեալ գայր նա ի կողմանցն Յունաց՝ բարձեալ բերէր ընդ իւր նշխարս ինչ յոսկերաց մեծի մարգարէին երանեալ մկրտչին Յովհաննու և զսուրբ վկային Քրիստոսի զԱթանագինէի: Եւ իբրև եկին հասին յանդիման մեհենացն, մօտ ի գետն եփրատ՝ կամէր հանել զնոսա ի վեր, ի բարձրաւանդակ տեղի մեհենացն, կործանել զբագինսն, և շինել զվկայարանս նոցա»<sup>21</sup>:

Ծածկոցի այս երեք կերպարները՝ Հովհաննես Մկրտչը կամ Կարապետը, Ստեփանոս Նախավկան և Ամենակալ Քրիստոսը, հայ արվեստում, հատկապես XVIII դարում, շատ սիրված և տարածված տեսարանի մաս են կազմել: Խոսքը Բարեխոսության տեսարանի մասին է: Օրինակ ՀԱՊ հավաքածուի մաս կազմող, XVIII դարի Անհայտ նկարչի կտավը: Կտավի վրա յուղաներկով, 85×65 սմ, ներկայացված են Աստվածամայրը Մանկան, Հովհաննես Մկրտչի և ս. Ստեփանոսի հետ: Այստեղ Քրիստոսն Ամենակալ պատկերագրությամբ է, սակայն Տիրամոր գրկում (նկ. 8): Պարտադիր չէ, որ ասեղնագործողը տեսած լիներ այս կտավը, սակայն թեման և պատկերագրական մանրամասները բնորոշ էին XVIII դարին, այդ թվում՝ Հովնաթանյանների գերդաստանի և նրանց արվեստանոցի մյուս նկարիչներին: Միակ ակնհայտ տարբերությունը կատարման նյութն էր. մեր

<sup>19</sup> Ա. Այվազյան, Նախիջևանի որմնանկարչական արվեստը, Երևան, 1998, էջ 67, 81, 93:

<sup>20</sup> Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XII-XIII դարերում: Գեղանկարչություն, Երևան, 1974, էջ 170-172:

<sup>21</sup> Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 411:

ծածկոցի դեպքում թեևն էր և գործվածքը, գեղանկարների դեպքում՝ յուզաներկն ու կտավը:

Մյուս կերպարին լեհ ուսումնասիրողները անվանում են Հռիփսիմե՝ նկատի ունենալով կույս Հռիփսիմեին, մինչդեռ ակնհայտորեն տեսնում ենք խաչելության տեսարան: Յոհաննա Սլավինսկան և Յակուբ Օսիեցկին այս եզրակացությունն են եկել մի քանի պատճառով: Նախ ծածկոցի ամբողջ պատկերագրական թեման համարել են նահատակների, մարտիրոսների, հանուն քրիստոնեության իրենց զոհաբերած անձանց կյանքի տեսարանները: Այսինքն, եթե Քրիստոսը, Հովհաննես Սկրտիչը և Ստեփանոս նախավկան մարտիրոսներ էին, ապա այս չորրորդ կերպարն էլ պետք է լիներ հավատքի համար նահատակված մեկը: Իսկ Հռիփսիմե կույսը հենց այդպիսին էր:

Կարծիքի համար մյուս հիմքն արձանագրության մեջ հանդիպող Հռիփսիմե անձնանունն էր, որն, ի դեպ, առանձնացված էր մյուս անուններից: Մասնավորապես «...Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԾՆՈՂԱՅ ՀՈԳՈՒ ՆԱՅԵՒ ՀՌԻՔՍԻՄԱ ԱՄԵՆ...»:

Անձնանունների նմանատիպ հիշատակումը այլ պատճառ ուներ: Սովորաբար սկիհի ծածկոցների արձանագրություններում հիշատակվում էին և՛ մահացածները և՛ ողջերը, իսկ ծածկոցը նվիրաբերվում էր բոլորի հոգու փրկության համար: Բնականաբար, ողջերի անուններն առանձնացվում էր մահացածների անուններից, իսկ այս դեպքում Հռիփսիմեն թերևս միակ ողջ անձն էր:

Մյուս պատճառը կերպարի կանացի առանձնատկություններն էին, մասնավորապես ընդգծված կուրծքը: Ինչպես գիտենք, խաչելությունից առաջ Քրիստոսին ամբողջովին մերկացրել են, նույնիսկ հագուստի համար զինվորները վիճակ են գցել (Հովհաննես ԺԹ՝ 23-24): Քրիստոսի մերկությունը պատկերվել է ձեռագրերում, արծաթագործության մեջ, կտավներում, բայց պետք է հաշվի առնել արտահայտչամիջոցների տարբերությունը: Այս ծածկոցի դեպքում թեևն է աշխատանքային գործիքը: Ներկի միջոցով ստացված ծավալը միանգամայն տարբերվում է թելի ստեղծածից և կանացիության տպավորություն կարող է ստեղծվել օրինակ հաստ թելի դեպքում:

Ըստ ավանդության, Հռիփսիմեն և մյուս կույսերը առաքինի կյանք են վարել Հռոմում: Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից խուսափելու համար կույսերը ապաստան են գտել Հայաստանում: Այստեղ էլ Տրդատ Մեծն է սիրահարվել Հռիփսիմեին և հետապնդել նրան: Երբ Տրդատը փորձել է տիրանալ կույսին. «... Իսկ նա զօրացեալ լինէր ի Հոգւոյն սրբոյ. գազանաբար ոգորեալ, առնաբար մարտնչէր. իբրև յերեք ժամուց սկսեալ մարտնչել մինչև ի տասն ժամն...»<sup>22</sup>:

Հռիփսիմեին գամել են չորս ցիցերի՝ երկուսը ոտքից, երկուսը ձեռքից, ապա

<sup>22</sup> Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, էջ 98-99:

այրել մարմինը կանթեղներով, կտրել լեզուն և այլն<sup>23</sup>: Եվս մեկ փաստ, որ ծածկոցի վրա ասեղնագործված կերպարը Հռիփսիմեն չէ, քանի որ շարձարանքի գործիքները չեն համապատասխանում Հռիփսիմեի շարձարանքների նկարագրությանը:

Այս վերջին տեսարանը, որն անմիջապես Գառան ներքևում էր և կլոր շրջանակի մեջ ամփոփված, իրականում Քրիստոսի խաչելության տեսարանն է (նկ. 9): Հետաքրքիր է, որ վաղ քրիստոնեական հուշարձաններում՝ կատակոմբներում, այն չի հանդիպում: Քրիստոնեությունը դեռևս ոչ մի երկրում պետական կրոն չէր, և քրիստոնյաները նպատակ ունեին հեթանոսներին քարոզել և բերել իրենց շարքերը: Պատկերացնենք, թե ինչ կզգար քրիստոնյաների հավատքին մասնակից հեթանոսը, եթե կատակոմբի պատին տեսներ խաչված Քրիստոսին: Փոխարենը պատկերում էին դատարկ հաշ<sup>24</sup>: Խաչելության տեսարանի պատկերագրական տիպը մանրամասներով ձևավորվեց Ռաբուլայի ավետարանում:

Յագելոնյան թանգարանի ծածկոցի այս տեսարանում խաչելությունը պատկերված է հիմնական, էական ատրիբուտներով, առանց այլ կերպարների: Քրիստոսը սկիհի մեջ է, սակայն ձեռքերը խաչի վրա չեն, այլ իջեցված: Գլխին արծաթաթիթելով ասեղնագործված պսակ է՝ փռե պսակը, նույն թիթելով ասեղնագործված երկու ճյուղեր էլ պահել է ձեռքերով: Հետևում իրար խաչված նիզակն ու սպունգն են, երևում է միայն խաչի վերին թևը: Կողքին շարձարանի գործիքներն են՝ Յ գամերը, ունելի, որով հանել են գամերը, աստիճանը, որով խաչից իջեցնելու են Քրիստոսին, իսկ աջ կողմի աքաղաղը Պետրոսի ուրացման խորհրդանիշն է:

Հետաքրքիր է Քրիստոսի պատկերագրական տիպը՝ «մելիսմոսը»: «Մելիսմոս» կամ «Ամնոս» պատկերագրական տեսակը տարածվեց Բյուզանդիայում և Բալկանյան թերակղզու երկրներում՝ Պալեոլոգյան դինաստիայի օրոք: Մելիսմոսի հիմքում ընկած էր այն գաղափարը, որ Քրիստոսը միաժամանակ Ձոհ էր, Քահանա, որ բերում էր Հաղորդության զոհին: Հենց Պատարագ բառը նշանակում է զոհ, նվեր, ընծա, իսկ Հաղորդությունը Քրիստոսի ինքնագոհաբերությունն է մեր փրկության համար: Քրիստոսն իրեն հաշտության պատարագ (զոհ) է մատուցում Աստծուն՝ ազատելու համար մարդկանց շարի կապանքներից<sup>25</sup>: Այսինքն մելիսմոսը Հաղորդության տեսարանն էր, ըստ էության, սակայն սեղանին մատուցվող Ձոհը ո՛չ գինին էր, ո՛չ նշխարը, ո՛չ էլ Աստծո Գառը, այլ Քրիստոսը, որին պատկերում էին մանուկ հասակում, սեղանին՝ մաղզմայի մեջ:

Խաչելության տեսարանում Քրիստոսի մելիսմոս պատկերագրությունը

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 106:

<sup>24</sup> Н. В. Покровский, *Евангелие в памятниках иконографии: преимущество византийских и русских*, Москва, 2001, с. 405.

<sup>25</sup> <http://ter-hambardzum.net/inch-e-nshanakum-haghorduthyun-harc-ev/>

նպատակ ունենալով մատնանշելու նրա զոհաբերությունը մարդկանց մեղքերին թողություն տալու համար: Խաչելություն տեսարանի նման մեկնաբանություն հանդիպում ենք արվեստի տարբեր հուշարձաններում: Այսպես օրինակ, մետաղագործություն մեջ Օրթաքյոյի Ս. Աստվածածին եկեղեցուն նվիրված, բայց այժմ Գում Գափուի թանգարանում պահվող 1815 թվականով թվագրվող ճաճանչը: Հիմնականում նույն կառուցվածքն ունի, ավելանում են արևն ու լուսինը<sup>26</sup>: Նույն թանգարանում գտնվող և 1808 թվականով թվագրվող մեկ այլ մասունքով ճաճանչ իր ընդհանուր հարդարանքով շատ նման է Յագեղոնյան թանգարանի ծածկոցի պատկերներին՝ Խաչելության տեսարան, Գառանը գրկած Հովհաննես Մկրտիչը, բուրվառով Ստեփանոս Նախավկան<sup>27</sup>:

Պատկերագրական այս տիպերն արևմտյան են: Արևմտյան պատկերագրությունը կարող էր ներթափանցել հիմնականում տպագիր գրքերի միջոցով: Բերենք մի քանի նմուշ Կ. Պոլսում և անհայտ վայրերում (ոճական առումով նման Կ. Պոլսի օրինակներին) 1709, 1717, 1724, 1725, 1728 թվականներին տպագրված հմայիլներից (Տե՛ս նկ. 3-9):

Ընդհանուր առմամբ, եթե ծածկոցի հարդարանքը համեմատենք Կոստանդնուպոլսում տպագրված հմայիլների պատկերների հետ, ապա կարելի է նաև ենթադրել, որ Յագեղոնյան թանգարանում պահվող սկիհի այս ծածկոցը գուցե նաև Կոստանդնուպոլսում է ստեղծվել, ապա նվիրաբերվել Մշո Ս. Կարապետ վանքին:

Մյուս սկիհի ծածկոցը էջմիածնի թանգարանում է պահվում, ունի 463 համարը, ստեղծվել է 1856 թվականին Կ. Պոլսում: Կարմիր կտորի վրա ոսկեթել և մետաքսաթել ասեղնագործություն է: Կենտրոնում Աստծո Գառն է՝ շրջապատված ճաճանչազարդ շրջանակով: Ճաճանչները փուլերով են ասեղնագործված:

Արձանագրությունը՝

ՅԻՇԱՏԱԿ է ՄՂՈՒ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՏԱՃԱՐԻՆ ՉՈՐ ԸՆԾԱԵԱՅ ՄԻՋԱՂԵՂՅԻ ՀԱՅԱԳՈՐԾ ԴԱԽԻ ՈՐԳԻ ՊԱՐՈՆ ԵՂԵԱՆ ՅՈՒՐ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄՕՐՆ ՏԻՐՈՒՀԻՈ, ՀՈԳԻՈՅՆ ԵՒ ՎԱՍՆ ԿԵՆԴԱՆԵԱՅ ԵՎ ՆԵՋԵՅԵԼՈՅ ՀՈԳԻՈՅՆ ՅԱՄԻ ՓՐԿՉԻՆ 1856 ԱՊՐԻԼ 26<sup>28</sup>:

Հաջորդ սկիհի ծածկոցը պահվում է էջմիածնի գանձարանում, ունի 33 հա-

<sup>26</sup> Marchese, R., Breu M. e.a., *Treasures of Faith: Sacred Relics and Artifacts from the Armenian Orthodox Churches of Istanbul*, Istanbul, 2015, p. 149.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 242:

<sup>28</sup> «Միջաղեղցի» ասելով հավանաբար նկատի ունի Կ. Պոլսի Միջագյուղ թաղամասը՝ թուրք.՝ Ortaköy, անգլ.՝ Middle Village, բառացի թարգմանությամբ՝ Միջին գյուղ: Այն Բոսֆորի նեղուցի եվրոպական ափին է: Հայերն այստեղ մեծ թիվ էին կազմում, 1785 թվականի հիմնել էին Թարգմանչաց կոչվող վարժարանը, որը բազմաթիվ հայ մտավորականների է ավել պատմությանը: Տե՛ս՝ <http://bit.ly/331dP7k>, Թուրքիայի Հայոց պատրիարքարանի պաշտոնական կայքէջ:

**մարր:** 1862 թվականին նվիրաբերվել է Մշո Սուրբ Կարապետ վանքին<sup>29</sup>: Մուգ շագանակագույն մետաքսի վրա դեղինի և հողագույնի երանգներով ասեղնագործություն է: Ներքևից երկու կողմից դեպի վերև սկիհից դուրս եկող ծաղկազղթաները կազմում են շրջանակ: Ծաղկային շրջանակի մեջ Տիրամայրն է մանկան հետ, Օդիգիդրիա պատկերագրությամբ (նկ. 10): Մանուկ Քրիստոսն ու Տիրամայրը թեքված են իրար կողմ, գլուխ գլխի, կրում են խաչով հարդարված թագեր: Տիրամայրը իր աջ ձեռքի մեջ է պահում մանուկ Քրիստոսի ձախ ձեռքը: Բավականին ներդաշնակ և հուզական պատկեր է ստացվել:

Տիրամոր պատկերագրության Օդիգիդրիա տիպը ձանապարհ ցույց տվող Տիրամայրն է (*Οδηγήτρια*)<sup>30</sup>: Դեռևս մինչև Բյուզանդական պատկերագրական կանոնների ձևավորումը, Հայկական լեռնաշխարհում արդեն կար Օդիգիդրիա տիպը, որի արմատները գնում են հեռավոր Արևելք, ղպտական արվեստ: Տիրամոր կերպարը ձևավորվեց ինչպես իրական նկարագրությունների, այնպես էլ տվյալ տարածաշրջանում աստվածուհիների պաշտամունքի հետ միախառնվելով: Արվեստում հանդիպող բազմաթիվ կերպարներում շեշտը դրվում էր ոչ թե գեղեցկության և սիրո գաղափարների, այլ Աստվածածնի՝ «Անաղարտ կույսի», «Ստնտու մոր», «Երկնային Տիրամոր և ողբացող մոր» կերպարի վրա: Եթե սիրո, պատերազմի և հաղթանակի աստվածուհիները երկրների և քաղաքների հովանավորներ էին, ապա Տիրամայրը՝ ամբողջ մարդկության «Մեծագույն մայրը», «Ստնտուն», «Փրկիչն» էր: Նա «Երկնային եկեղեցին» էր, ամբողջ մարդկության հովանավորը և փրկության բարեխոսը<sup>31</sup>:

Դվինի պեղումների ժամանակ կենտրոնական թաղամասի հարավային մասում գտնված մի խոյակի արևմտահայաց ճակատին փորագրված է Հիսուսին գրկած Տիրամայրը: Այն Տիրամորը ներկայացնող վաղագույն պատկերաքանդակներից մեկն է V–VI դդ.: Պատկերաքանդակում Տիրամայրը բավականին արխայիկ կատարմամբ է, գլխաշորով և Օդիգիդրիայի տիպով: Տիրամոր և մանկան դիմագծերը և հագուստները տեղական են: Մանուկ Քրիստոսը խոշոր աչքերով և գանգուր մազերով է, աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախում Ավետարանն է<sup>32</sup>:

Էջմիածնի գանձարանում պահվող այս ծածկոցի Տիրամայրը մանկան հետ բավականին հմուտ ասեղնագործված աշխատանք է, կա գույների ներդաշնակություն, բարձրարվեստ ասեղնագործություն է: Կատարված է սուզանի ասեղ-

<sup>29</sup> Ք. Ավետիսյան, Աստվածածնի պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում, Երևան, 2015, էջ 256:

<sup>30</sup> *Lexikon der christlichen Ikonographie*. Band 3. Rom-Freiburg-Basel-Wien, 1971. S. 168.

<sup>31</sup> Վ. Վասիլյան, «Տիրամոր «ձանապարհ ցույց տվող»՝ Օդիգիդրիա պատկերագրական տիպի ծագումը և նրա աղբյուրները անտիկ Հայաստանի արվեստում», *Անտառ ծննդոց, Հողվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին*, Երևան, 2015, էջ 207-221:

<sup>32</sup> Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, II, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի արշավախմբի 1951-1972 թթ. աշխատանքների արդյունքները, Երևան, 1982, էջ 53:



նագործությունը, որը շատ նման է շղթայակարին: Ծածկոցը եզրերված է ասեղ-նագործ ժանյակով:

Պատկերի ներքևում 4 տողով արձանագրություն է.

ՅԻՇԱՏԱԿ է ՊԱՏԿԷՐՍ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒ ԲՆԱԿԻՉ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ՅԱՐՈՒԹԻՆ ԵՂՊԱՐ ՆՈՐԻՆ ԿԱՐԱՊ(ԵՏ)ԻՆ ՍԱԽԱՃԻԱՆՅ Ի ՄՇՈՒ Ս(ՈՒՐ)Բ ԿԱՐԱՊԵՏԻՆ 1862:

Այսպիսով, XVIII -XIX դարերին Մշո Ս. Կարապետը, լինելով Տարոն-Տուրուբերան գավառի ամենանշանավոր վանքը, հայտնի էր և՛ իր ծավալած կրթամշակութային գործունեությամբ, և՛ իր կուտակած արվեստի գանձերով: Դրանց մեջ էին բազմաթիվ ձեռագրեր, շարակնոցներ, տաղարաններ, գանազան եկեղեցական սպասք: Հոգվածը նպատակ ուներ ամբողջացնել մեզ հասած սկիհի ծածկոցների նմուշները: Յավոք սրտի, Մշո Ս. Կարապետը բարբարոսաբար ոչնչացվել է 1915 թ. ամռանը: Եվ միայն նվիրյալների շնորհիվ հնարավոր եղավ փրկել Ս. Կարապետի խոշոր գաղտնարաններից մեկում հայտնաբերված գանձերը: Ի թիվս այլ փրկված իրերի հիշատակվում է սկիհի 59 ծածկոց: Մեր ներկայացրած ծածկոցների պատկերագրական քննությունից պարզ է դառնում, որ դրանք նման էին հայերի կողմից ստեղծված մյուս եկեղեցիներում պահվող սկիհի ծածկոցներին: Ասեղնագործության սխեման գրեթե միշտ նույնն է՝ կենտրոնում ճաճանչի մեջ սովորաբար Քրիստոսի խորհրդանիշներն էին՝ Աստծո Գառ, Խաչ, Խաչելություն և այլն: Ճաճանչապսակի շուրջը սովորաբար առաքյալների, սերովբեների, քերովբեների պատկերներն էին, անկյուններում՝ ավետարանիչների պատկերները: Այս դասավորությունը պատահական չէր: Կարծես աշխարհի կառուցվածքը լիներ. Կենտրոնում կյանքի սկիզբն էր՝ Քրիստոսը, որից լույս էր ճառագում, ապա հրեշտակներն էին, որոնք միջնորդ էին Աստծո և մարդկանց միջև: Հրեշտակներից Աստծոն ամենամոտ կանգնածը սերովբեներն էին: Սովորաբար Ծածկոցի ազատ մնացած հատվածներում ասեղնագործում էին մանր խաչեր, աստղիկներ և այլն: Մյուս կարևոր հատվածը ծածկոցների դեպքում արձանագրություններն էին: Դրանք հիշատակագրային էին, երբեմն նաև նվիրատվական: Հիշատակագրային են համարվում այն արձանագրությունները, որոնք հիշատակում են հանգուցյալի մասին հակիրճ տվյալներ՝ անունը, տոհմանունը, մասնագիտությունը և այլն:



Նկ. 1. Սկիհի ծածկոց, 1754 թ.,  
նվիրաբերված Մշո Ս. Կարապետ  
վանքին, այժմ՝ էջմիածնի  
գանձարանում



Նկ. 2. Սկիհի ծածկոց, 1754 թ.,  
նվիրաբերված Մշո Ս. Կարապետ  
վանքին, այժմ՝ Լեհաստանի  
Յագելոնյան Թանգարանում



ա)



բ)



գ)



դ)

Նկ. 3. Աստծո Գառ, ա) Սկիհի ծածկոց Յագերոնյան թանգարանից, բ) Հմայիլ, Կ. Պոլիս, 1709 թ., գ) Հմայիլ, 1725 թ. դ) Հմայիլ, 1728 թ.



ա)



բ)



գ)

Նկ. 4. Սերովբե, ա) Սկիհի ծածկոց Յագերոնյան թանգարանից, բ) Հմայիլ, 1724 թ., գ) Հմայիլ, 1725 թ.



ա)



բ)



գ)



դ)



ե)



զ)

Նկ. 5. Ստեփանոս Նախավկա ա) Սկիհի ծածկոց Յագեղոնյան թանգարանից, բ) Հմայիլ, Կ. Պոլիս, 1709 թ., գ) Հմայիլ, 1724 թ., դ) Հմայիլ, 1725 թ., ե) Հմայիլ, 1728 թ., զ) Ջնաբերդի Ս. Գրիգոր եկեղեցի





Նկ. 6. Քրիստոս ամենակալ,  
Սկիհի ծածկոց Յագելոնյան  
թանգարանից



ա)



բ)



գ)



դ)



ե)

Նկ. 7. Հովհաննես Մկրտիչ, ա) Սկիհի ծածկոց Յագելոնյան թանգարանից, բ) Հմայիլ, Կ. Պոլիս, 1709 թ., գ) Հմայիլ, 1724 թ., դ) Հմայիլ, 1725 թ., ե) Հմայիլ, 1728 թ.



Նկ. 8. Բարեխոսության տեսարան, 18-րդ դար, Աննայտ նկարիչ, ՀԱՊ



ա)



բ)



գ)

Նկ. 9. Խաչելություն, ա) Սկիհի ծածկոց Յագերոնյան թանգարանից, բ) Հմայիլ, Կ. Պոլիս, 1709 թ., գ) Հմայիլ, 1717 թ., դ) Հմայիլ, 1725 թ., ե) Հմայիլ, 1728 թ.



դ)



ե)



Նկ. 10. Սկիհի ծածկոց, 1862 թ., նվիրաբերված Մշո Ս. Կարապետ վանքին, այժմ էջմիածնի գանձարան



ANNA ONANYAN

**THE ICONOGRAPHY OF CHALICE COVERS  
DONATED TO THE MONASTERY OF ST. KARAPET IN MUSH**

**Key words:** Monastery of St. Karapet in Mush, chalice cover, angel, cherub, seraph, Crucifixion, martyr, embroidery, iconography.

In the 18<sup>th</sup>-19<sup>th</sup> centuries, the Monastery of St. Karapet in Mush, the most famous monastery in the province of Taron-Turuberan, was known for its educational and cultural activities and its art treasures. Among them were numerous manuscripts and various church utensils. Our goal was to collect and present the extant chalice covers. St. Karapet of Mush was barbarically destroyed in the summer of 1915. Only thanks to some devotees it was possible to save St. Karapet's treasures. In the report of this event, 59 chalice covers are mentioned. Our iconographic analysis clearly shows that they are similar to other Armenian chalice covers. The scheme of the embroidery is almost the same. The center of the composition includes the symbols of Christ: the Lamb of God, Cross, Crucifixion etc. Around the symbols, a radiant wreath is usually embroidered, then images of apostles, cherubs, seraphs, and angels. This iconography has a meaning: we think that it is the structure of the world. In the center, we see the beginning of the Life, that is Christ, from whom light radiates, then come the angels, the mediators between God and men. Since the seraphs are closest to God, they are usually depicted close to the center. A small cross and stars are embroidered in the free part of the covers. The other important part of the iconography are the inscriptions. They are commemorative, sometimes donative. The commemorative inscriptions contain brief information about the deceased (name, surname, profession etc.).

АННА ОНАНЯН

**ИКОНОГРАФИЯ ПОКРОВОВ ПОТИРОВ, ДАРОВАННЫХ  
МОНАСТЫРЮ СУРЬ КАРАПЕТ В МУШЕ**

**Ключевые слова:** Сурб Карапет, Муш, покровы на потир, ангел, серафим, херувим, Распятие, мученик, вышивание, иконография.

В XVIII-XIX веках Сурб Карапет (Св.Предтеча) в городе Муш был самым знаменитым монастырем в округе Тарон провинции Турубера. Монастырь был известен своей культурно-образовательной деятельностью, сокровищами

искусства – рукописями, церковной утварью и т.д. Нашей целью было собрать и представить дошедшие до наших дней образцы покровов из Сурб Карапетя. К сожалению, летом 1915 года монастырь был варварски разграблен. Верные люди смогли унести и спасти часть спрятанных армянами сокровищ. Среди них упоминаются 59 покровов на потиры. Иконографией они не отличаются от других армянских покровов. Схема вышивки та же – в центре в лучезарном ореоле вышиты символы Иисуса Христа: Агнец Божий, Крест, Распятие. Вокруг вышиты ангелы, серафимы, херувимы, Апостолы, а по краям Евангелисты. Такая схема не случайна: мы здесь видим строение мира. В центре начало жизни – Христос, излучающий свет, вокруг ангелы, посредники между Богом и людьми. Остальная часть покровов вышита крестиками, звездочками. И наконец, важная информативная часть покровов – надписи. В большинстве своем они мемориальные – в них упоминаются имя, фамилия, профессия умершего.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

<b>Արտակ Մաղալյան</b> Ղարաբաղի խանության և Օսմանյան կայսրության առնչությունների պատմությունից .....	5
<b>Գեորգի Միրզաբեկյան</b> Դարաշամբի 1590 թ. օսմանյան հարկացուցակը.....	27
<b>Արամ Թովչյան</b> Հունա-հոմոտեական հատուկ անունները Մխիթարյանների հայերեն թարգմանություններում և դրանց տառադարձման նոր սկզբունքները .....	38
<b>Գոռ Երանյան</b> Ամիրջը Տիգրանակերտ կոչելու հայկական ավանդույթը.....	52
<b>Զուլիետա Էյնաթյան</b> Տիեզերքի մասին գիտելիքները Հայաստանում Ե-ԺԳ դարերում .....	67
<b>Գայանե Թերզյան</b> Գրիգոր Մարաշեցու մատենագրական վաստակը (Ընդհանուր ակնարկ).....	78
<b>Գևորգ Ստեփանյան</b> Ճակերթի վանքը պատմության ֆառոտիներում .....	92

## ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

<b>Նարինե Վարդանյան</b> Հայոց կանոնական ժողովածուն մատենագրական աղբյուրներում և հիշատակարաններում.....	145
<b>Մանե Ղևոնդյան</b> Մխիթար Սեբաստացու «Քրիստոնեականներ»-ը որպես կրթադաստիարակչական դասագրքի նմուշ.....	158

## ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>Աստղիկ Մուշեղյան</b> Հոգևոր տաղերգության նմուշների Կոմիտասյան գրառումները.....	171
--	-----

**ՊՐՈՑ. ՀԱԿՈՒ ՓԱՓԱՋՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ-ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՅԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

<b>Վահան Տեր-Ղևոնդյան</b>	
Բացման խոսք .....	195
<b>Հասմիկ Կիրակոսյան</b>	
«Ազդարար»-ում տպագրված հայատառ պարսկերեն մի գրության մասին.....	198
<b>Քրիստինե Կոստիկյան</b>	
Ազոլիսի ժ. դարի հայ վանատական հոջա Հովհաննեսի փաստաթղթերը Մատենադարանի կաթողիկոսական դիվանում .....	211
<b>Արսեն Հարությունյան</b>	
Սովի վկայությունները ժ. դարակցրի հայ մատենագրության մեջ .....	224
<b>Անահիտ Թովմասյան</b>	
Թուրան որպես օսմանյան սուլթանների ինֆնիշխանության խորհրդանիշ.....	234
<b>Աննա Օնանյան</b>	
Մշո Սուրբ Կարապետ վանքին նվիրաբերված սկիհի ծածկոցների պատկերագրությունը .....	247
<b>Ժիլբերտ Մեջանբարյան</b>	
Սեֆյան դարաշրջանի սկզբնաղբյուրները որպես հայ ժողովրդի ժ. – ժ. դարերի պատմության աղբյուր .....	267
<b>Ալբերտ տեն Կատե</b>	
Բառեր, գույակություններ կամ պատգամներ՝ տասը պատվիրանները հայկական ավանդության մեջ (անգլերեն) .....	281
<b>Շախբան Խաչիզով</b>	
Հայկական աղբյուրները Դադստանի միջնադարյան պատմության մասին (ռուսերեն) .....	289
<b>Անի Ավետիսյան</b>	
Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուի հմր. 1751 երայատառ արաբերեն բժշկարանների ժողովածու (անգլերեն) .....	310

<b>Կոնստանտինոս Տակիրտակոզլու</b>	
Աշոտ Բ Երկաթը և բյուզանդացիները. դաշնակիցներ մինչև վե՛րջ, թե՛ ի վերջո թշնամիներ (անգլերեն) .....	317
<b>Էնդի Հիլկենս</b>	
Հակոբ Սրենցու հատերի հայերեն թարգմանությունները .....	329
<b>ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ</b>	
<b>Գեորգ Տէր-Վարդանեան, Աննա Մարիա Մատար</b>	
Հայերէն հնատիպ մի նորայայտ տպագրութիւն.....	349
<b>Հակոբ Քյոսեյան</b>	
Նորահայտ էջեր Դավիթ Քոբայրեցու մատենագրական ժառանգությունից .....	363
<b>Միհրան Մինասեան</b>	
Անտիպ ժամանակագրութիւն 1821 թուականի յունական ապստամբութեան շրջանէն.....	402
<b>ՀԱՂՈՐԴՈՒՄ</b>	
<b>Հայկ Համբարձումյան</b>	
Իրանի մշակույթի օրեր Մատենադարանում.....	427
<b>ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ</b>	
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ .....	429

---

**CONTENTS**
**HISTORY AND PHILOLOGY**

<b>Artak Maghalyan</b> From the History of Relations between the Karabakh Khanate and the Ottoman Empire.....	5
<b>Georgi Mirzabekyan</b> The Ottoman Tax Register of Darashamb (Year 1590) .....	27
<b>Aram Topchyan</b> The Greco-Roman Proper Names in the Mechitarists' Armenian Translations and the New Rules of their Transliteration.....	38
<b>Gor Yeranyan</b> The Armenian Tradition of Calling Amid Tigranakert.....	52
<b>Julietta Einatyan</b> Cosmography in Armenia in the 5th-13th Centuries.....	67
<b>Gayane Tezyan</b> Grigor Marashets'i's Literary Legacy.....	78
<b>Gevorg Stepanyan</b> Chalet' Monastery at the Crossroads of History.....	92

**CHURCH HISTORY**

<b>Narine Vardanyan</b> The Armenian Canonical Collection in Literary Sources and Colophons.....	145
<b>Mane Ghevondyan</b> The Catecheses by Mkhit'ar Sebastats'i as a Model Textbook of Christian Education and Upbringing.....	158

**MUSICOLOGY**

<b>Astghik Musheghyan</b> Armenian Sacred Taghs Recorded by Komitas.....	171
---	-----

---

**INTERNATIONAL CONFERENCE ON ARMENOLOGICAL AND  
ORIENTAL STUDIES DEDICATED TO THE 100TH ANNIVERSARY  
OF PROF. HAKOB PAPAŽIAN**

<b>Vahan Ter-Ghevondyan</b>	
Opening Speech.....	195
<b>Hasmik Kirakosyan</b>	
On an Armeno-Persian Document Published in “Azdarar”.....	198
<b>Kristine Kostikyan</b>	
The Documents of Khoja Hovhannes, an 18 <sup>th</sup> Century Armenian Merchant of Agulis, in the Archive of the Catholicosate of Matenadaran.....	211
<b>Arsen Harutyunyan</b>	
The Evidences of Famine in the Armenian Literary Sources of the Early 17 <sup>th</sup> Century.....	224
<b>Anahit Tovmasyan</b>	
<i>Fughra</i> as a Symbol of the Sovereignty of the Ottoman Sultans.....	234
<b>Anna Onanyan</b>	
The Iconography of Chalice Covers Donated to the Monastery of St. Karapet in Mush.....	247
<b>Jilbert Meshkanbarians</b>	
Safavid Iranian Sources on Armenia of the 17 <sup>th</sup> – 18 <sup>th</sup> Centuries.....	267
<b>Albert ten Kate</b>	
Words, Oracles or Commandments – the Decalogue in the Armenian Tradition.....	281
<b>Shakhban Khapizov</b>	
Armenian Sources on the Medieval History of Dagestan (in Russian).....	289
<b>Ani Avetisyan</b>	
MS M1751 Judaeo-Arabic Medical Miscellany of the Matenadaran Collection.....	310
<b>Konstantinos Takirtakoglou</b>	
Ashot II Yerkat and the Byzantines: Allies to the End or Ultimately Enemies?.....	317
<b>Andy Hilkens</b>	
The Armenian Reception of the Homilies of Jacob of Serugh.....	329



**PUBLICATIONS**

<b>Gevorg Ter-Vardanyan, Anna Maria Mattaar</b> A Newly Discovered Old Armenian Printing.....	349
<b>Hakob Keosean</b> Pages nouvellement découvertes de l'héritage littéraire de David Kobayrétsi.....	363
<b>Mihran Minassian</b> Unpublished Chronicle of the Greek Uprising of 1821.....	402

**REPORT**

<b>Hayk Hambardzumyan</b> The Days of Iranian Culture at Matenadaran.....	427
--	-----

## СОДЕРЖАНИЕ

### ИСТОРИЯ И ФИЛОЛОГИЯ

<b>Артак Магальян</b> Из истории отношений Карабахского ханства с Османской империей.....	5
<b>Георгий Мирзабекян</b> Османский налоговый реестр Дарашамба 1590 г.....	27
<b>Арам Топчян</b> Греко-римские собственные имена в армянских переводах Мхитаристов и новые принципы их транслитерации.....	38
<b>Гор Еранян</b> Об армянской традиции называть Амид Тигранакертом.....	52
<b>Джюльетта Эйнатян</b> Знания о вселенной в Армении с V по XIII века.....	67
<b>Гаяне Терзян</b> Литературное наследие Григора Марашеци.....	78
<b>Геворг Степанян</b> Чалетский монастырь на перекрестках истории.....	92

### ИСТОРИЯ ЦЕРКВИ

<b>Нарине Варданян</b> Армянский канонический сборник в литературных источниках и памятных записях.....	145
<b>Мане Гевондян</b> Катехизисы Мхитара Себастици, как модель христианского образования и воспитания.....	158

### МУЗЫКОВЕДЕНИЕ

<b>Астхик Мушегян</b> Армянские духовные таги, записанные Комитасом.....	171
---	-----

**МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ АРМЕНИСТОВ И ВОСТОКОВЕДОВ,  
ПОСВЯЩЕННАЯ 100-ЛЕТНЕМУ ЮБИЛЕЮ АКОПА ПАПАЗЯНА**

<b>Ваан Тер-Гевондян</b> Вступительна речъ.....	195
<b>Асмик Киракосян</b> Об одном персидском арменографическом документе, напечатанном в журнале “Аздарар”.....	198
<b>Кристине Костикян</b> Документы агулисского купца 18-го века ходжи Ованеса в архиве католикосата в Матенадаране.....	211
<b>Арсен Арутюнян</b> Свидетельства о голоде в армянской источниках начала XVII века.....	224
<b>Анаит Товмасян</b> Тугра как символ суверенитета османских султанов.....	234
<b>Анна Онанян</b> Иконография покровов потиров, дарованных монастырю Сурб Карапет в Муше.....	247
<b>Жильберт Мешканбарян</b> Иранские Сефевидские источники об Армении XVII-XVIII веков.....	267
<b>Альберт тен Кате</b> Слова, пророчества или заповеди – Декалог в армянской традиции.....	281
<b>Шахбан Хапизов</b> Армянские источники по средневековой истории Дагестана.....	289
<b>Ани Аветисян</b> Рукопись М 1751 арабской коллекции Матенадарана.....	310
<b>Константинос Такиртакоглу</b> Ашот II Еркат и Византия: союзники до конца или в конечном счете враги? .....	317
<b>Энди Хилькенс</b> Армянские переводы речей Иакова Серугского	

---

**ПУБЛИКАЦИИ**

- Геворг Тер-Варданян, Анна Мария Маттаар**  
Новонайденное старопечатное армянское издание.....349
- Акоп Кесеян**  
Новонайденные страницы литературного  
наследия Давида Кобайреци.....363
- Мирян Минасян**  
Неопубликованная хроника периода греческого восстания 1821 года.....402

**СООБЩЕНИЕ**

- Айк Амбарцумян**  
Дни иранской культуры в Матенадаране .....427

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**  
Հատոր 32

**BULLETIN OF MATENADARAN**  
Volume 32

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
Том 32

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ Մատենադարանում պահվող Իրանի դաջարական շրջանի  
խեժապատ կազմի դրվագ՝ Զիրավի ճակատամարտի  
տեսարանով (ՄՄ, ձեռ. հ<sup>մր</sup>. 6203, 19-րդ. դ.)  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

27,5 մամուլ  
Ձափ՝ 70×100 1/16: Տպագրման թիվ՝ 200

Մատենադարան  
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի  
հրատարակչական բաժին  
Բ. Երևան, Մաշտոցի պող. 53  
Հեռ. (010) 513033  
publishing.matenadaran@gmail.com